26 ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՅՈՒԼԱԿ ԴԵՎՈՐԳՅԱՆ

Ղեկավարվելով կոմունիստական կուսակցության կադրային քաղաքականության պահանջներով, ԱՍՖՍՀ Կենտգործկոմի առաջին սեսիան (1923 հունվար) որոշում ընդունեց Թիֆլիսում բացել Անդրկովկասյան կոմունիստական համալսարան, որը կոչվեց Բաքվի 26 կոմիսարների անունով։ Որպես կուսակցական բարձրագույն դպրոց, այն պետք է պատրաստեր ժամանակի բարդ իրադրության մեջ կողմնորոշվելու ընդունակ որակյալ կուսաշխատողներ։ Համալսարանի ստեղծողները նպատակ էին հետապնդում այն դարձնել բազմազգ Երկրամասի համար ղեկավար կադրեր դարբնելու ինտերնացիոնալ օջախ։

Ողջունելով 26 կոմիսարների անվան անդրկովկասյան կոմունիստական համալսարանի ստեղծումը, Ա. Մռավյանը գրում էր, որ ստեղծված քաղաքական ու տնտեսական նոր իրադրությունը պահանջում է հարյուրավոր գիտականորեն պատրաստված կադրեր, որոնք մոտ ապագայում կարողանան գրավել Երկրամասի կուսակցական ու պետական ապարատի հրամանատարական կետերը[1]։

1923 թ. հունվար-փետրվար ամիսները հանդիսացան նախապատրաստական շրջան, որից հետո մարտին, համալսարանի աշխատանքները կանոնավորվեցին։ Այն ստեղծվեց Վրաստանի կենտրոնական կուսակցական դպրոցի բազայի վրա, դառնալով նրա նյութատեխնիկական և ուսումնատարտադրական միջոցների լիիրավ տնօրենը։

Մինչև 1923 թ. մարտի մեկը համալսարանում պարապմունքները տեղի էին ունենում ռուսական և վրացական սեկտորներում։ Ապա սկսեց գործել համալսարանի հիմնական հասարակական-մանկավարժական ֆակուլտետը (տեղերից գործուղված 116 ունկնդիրներով)։ Նույն թվականի մայիսի երկրորդ կեսին, 22 ուսանողներով, իր աշխատանքներն սկսեց ադրբեջանական սեկտորը։ Համալսարանի ոչ լրիվ առաջին ուսումնական տարին ավարտվեց 1923 թ. հունիսին։ Վրացական ու ռուսական սեկտորների 82 շրջանավարտներ դրվեցին Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի տրամադրության տակ[2]։ 1923 թ. աշնանը պարզ դարձավ, որ նման միակցությունը նպատակահարմար չէ, ուստի համալսարանի վարչության միջնորդությամբ ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմը նոր ուսումնական տարում վերացրեց սեկտորները, որից հետո 1923 թ. նոյեմբերին (որը և համարվում է նրա պաշտոնական բացման ժամանակը), համալսարանը դարձավ տիպային կոմունիստական բարձրագույն ուսումնական հաստատություն։ Հաշվի առնելով, որ նրա սովորողների կազմն ապահովելու համար տեղերում չկային համապատասխան թվով պատրաստված (երկրորդ աստիճանի կուսսո-

---

[1] *Ա ս ք. Մ ռ ա վ յ ա ն, Հոդվածներ ու ճառեր, Երևան, 1961, էջ 164։*

[2] «ЗКУ им. 26-и Комиссаров» *(այսուհետև* «ЗКУ им. 26-и»), Тифлис, 1926, с. 12.

վնտական դպրոց ավարտած) բանվորներ ու գյուղացիներ, որոշվեց համալսարանում բացել միամսյա նախապատրաստական դասընթացներ, որոնք, սակայն, 1925 թ. դեկտեմբերին փակվեցին՝ հիմնականում նյութական դժվարությունների պատճառով։ Համալսարանում դասավանդումը կատարվում էր ռուսերեն, վրացերեն, հայերեն և ադրբեջաներեն լեզուներով։

Առաջին ուսումնական տարում համալսարանն ունեցել է երկու ֆակուլտետ՝ հասարակական-մանկավարժական և կուսակցական-սովետական։ 1923—1924 ուստարվա վերջում, Համկ(բ)կ XIII համագումարի ու կոմհամալսարանների II կոնֆերանսի որոշումների համաձայն, կոմունիստական համալսարանների մասնագիտացումը վերացվեց և երկու ֆակուլտետները միավորվեցին[3]։

Հաջորդ երկու ուսումնական տարիներին հաստատությունն արդեն աշխատում էր կոմունիստական համալսարաններին հատուկ որոշակի դրվածքով։ Ուսումնադաստիարակչական աշխատանքների ծանրությունը տեսականից փոխադրվում էր պրակտիկայի վրա, այսինքն իրականացվում էր կուսակցական պրակտիկներ պատրաստելու սկզբունքը։ Համալսարանի վարչության որոշմամբ նրա հիմնական կուրսերն ու նախապատրաստական բաժանմունքի խմբերը (մինչև դրանց փակվելը) դասավանդվող լեզվին համապատասխան բաժանված էին չորս սեկտորների՝ ռուսական, վրացական, ադրբեջանական և հայկական։

Համալսարանի ռեկտորներն են եղել Ս. Տակուր, Մ. Օկուջավան, Ս. Կասյանը, Ա. Գուլոյանն ու Ն. Ստեփանյանը։ Առանձին ուսումնական մասերի, սեկտորների և ուսումնաարտադրական մյուս օղակների աշխատանքները ղեկավարել են Գ. Պյասեցկին, Ս. Բուաշիձեն, Պ. Բուտիրինան, Ա. Մինասյանը, Ռ. Գրիշչենկոն, Ա. Գուզուշավան, Ա. Թումանյանը, Շ. Մանաթովը և ուրիշներ, որոնք առարկայական հանձնաժողովների նախագահներ և դասախոսներ Ս. Սեֆի, Գ. Կոնիևի, Ա. Մուրավյովի, Մ. Ալագարդյանի, Ն. Մգելաձեի, Գ. Գեխտմանի, Ղ. Տեր-Ղազարյանի, Ս. Յուզբաշյանի և ուրիշների հետ միասին տարիների ընթացքում կրթել ու դաստիարակել են կոմունիստական համալսարանի ուսանողներին։ 1924—1925 ուստարում համալսարանի 65 դասախոսներից հայեր էին 21-ը, ռուսներ՝ 17-ը, վրացիներ՝ 15-ը, ադրբեջանցիներ՝ 7-ը, այլ ազգությունների ներկայացուցիչներ՝ 5-ը[4]։

1925—1926 ուստարվա սկզբին համալսարանի 359 սովորողներից վրացիներ էին 92-ը, հայեր՝ 91-ը, ռուսներ՝ 79, ադրբեջանցիներ՝ 50-ը, այլ ազգությունների ներկայացուցիչներ՝ 47-ը։ Ինտերնացիոնալ էր նաև համալսարանի վարչատնտեսական աշխատողների կազմը[5]։

Բաց անելով «...26-ի պատգամներով մարտ գնացող Անդրկովկասյան կոմունիստական համալսարանի առաջին մարտական շարասյանը» կյանքի ուղեգիր տալուն նվիրված հանդիսավոր նիստը (1926 թ. հունիս) և համառոտակի բնութագրելով երկրամասի կուսակցական կազմակերպության՝ այդ տարիների բաղաքական կյանքում խոշոր իրադարձություն հանդիսացող ուսումնական հաստատության անցած ուղին, նոր ռեկտոր Ս. Կասյանը ողջույնի հա-

---

[3] Նույն տեղում, էջ 13։

[4] Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի վրացական մասնաճյուղի արխիվ (այսուհետև ՄԼԻ ՎՄԱ), ֆ. 128, ց. 1, գ. 23, թ. 77։

[5] «ЗКУ им. 26-и», с. 168, 173.

մար ձայներ տալիս է Ս. Օրջոնիկիձեին, որը Համկ(բ)կ Անդրերկրկոմի անունից, ողջունելով շրջանավարտներին ու խոսելով բանվոր դասակարգի ծոցից ելած սովետական ինտելիգենցիայի, սեփական կադրերի պատրաստման հարցի կարևորության մասին, հենց դա էլ համարում է համալսարանի հիմնական խնդիրներից մեկը[6]։ Զարգացնելով բանվորական ինտելիգենցիայի, սեփական ղեկավար կադրերի ստեղծման վերաբերյալ Ս. Օրջոնիկիձեի միտքը, Մ. Ցխակայան ընդգծում է համալսարանում ձեռք բերած գիտելիքները գործնական աշխատանքի ընթացքում հարստացնելու անհրաժեշտությունը, քանի որ, ինչպես նշում է նրանցից հետո ողջույնի խոսքով հանդես եկած Ա. Աղամալիօղլի, «պրոլետարական գիտությունը պետք է սուր դանակով բաց անի բոլոր հին վերքերը։ Անդրկովկասյան կոմունիստական համալսարանի առաջին շրջանավարտների թողարկումը պրոլետարական գիտության առաջին քայլերն է ԱՍՖՍՀ-ում»[7]։ Անդրկովկասյան Ժողկոմխորհի անունից հանդես եկած Մ. Օրախելաշվիլին համալսարանը բնութագրում է որպես «առաջին փորձնական լաբորատորիա...», որում հաղթանակի նկատմամբ պրոլետարիատի կամքը միավորվում է գիտությանը մերձենալու նրա կամքի հետ»[8]։ Պատասխան խոսքով հանդես եկած շրջանավարտները ունկնդիրների անունից շնորհակալություն հայտնելով պրոֆեսորադասախոսական կազմին ու բոլոր աշխատողներին, երախտագիտության իրենց խոսքն են ուղղում համալսարանի տարբեր ժամանակների ռեկտորներ Ս. Տակուհին, Մ. Օկուջավային ու Ս. Կասյանին և նշում Ալ. Մյասնիկյանի հատուկ ծառայությունները՝ կոմունիստական համալսարանի ստեղծման գործում։

«Այն, ինչ դուք ստացել եք համալսարանում,— գրված էր շրջանավարտներին Համկ(բ)կ Անդրերկրկոմի հղած ողջույնի հեռագրում,— պետք է հաղորդեք մեր երկրամասի աշխատավորներին։ Դուք հանդիսանում եք մեր կուսակցության կրտսեր հրամկազմը, գյուղում տարվող պրակտիկ աշխատանքի ղեկավարները»[9]։

Համալսարանի առաջին 124 շրջանավարտներից 46-ը ունեին բանվորական, իսկ 20-ը՝ գյուղացիական ծագում, ծառայողներից էին 58-ը։ Համկ(բ)կ անդամներ էին 91, թեկնածուներ՝ 13, ՀամԼԿԵՄ անդամներ՝ 20 հոգի։ Նրանցից հայեր էին 41-ը, ռուսներ՝ 36-ը, վրացիներ՝ 28-ը, ադրբեջանցիներ՝ 8-ը, հույներ՝ 5-ը, օսեթներ՝ 2-ը, այլ ազգությունների ներկայացուցիչներ՝ 4-ը[10]։

26 կոմիսարների անվան կոմունիստական համալսարանն ունեցել է ժամանակի բարձրագույն ուսումնական հաստատություններին բնորոշ կառուցվածք՝ վարչություն, քարտուղարություն, ուսումնական մաս (ուսումնական խորհուրդ, առարկայամեթոդական կենտրոնական հանձնաժողով, առարկայական ու առարկայախմբակային հանձնաժողովներ, կաբինետներ), որոնց մեջ, ըստ էության, ներառվել էին պարապմունքների մեթոդների, ուսումնական ծրագրերի, ուսանողների աշխատանքները գնահատելու, գրադարանի, ակումբի և հաստատության գործունեության այլ ոլորտներին վերաբերող հար-

---

6 «Заря Востока», 8. VI. 1926.

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում։

9 Նույն տեղում, 6. VI. 1926։

10 Նույն տեղում։

ցերի մշակումն ու կիրառումը։ Կային նաև ֆինանսատնտեսական բաժին, ուսանողական կազմակերպություններ և այլն։ Նպատակ չունենալով անդրադառնալ հիշյալ բնագավառներից յուրաքանչյուրի առանձնահատուկ քննությանը, ասենք, որ մեծ է եղել հետագայում (1927—1928 ուստարվանից) ամբիոնի իրավունք ստացած առարկայական հանձնաժողովների ու կաբինետների դերը՝ դասախոսների աշխատությունների հրատարակման գործում։ Սրանց նպատակն էր գիտական ժողովածուներով, ինչպես նաև լրացուցիչ մատչելի գրականությամբ ու դասախոսությունների տեքստերի հրապարակմամբ օգնել ուսուցման գործին։ Այսպես, օրինակ, 1930 թ. հրապարակվել է գավառագիտական կաբինետի բնագիտության սերիայի գիտական աշխատությունների մեծածավալ ժողովածու[11]։ Նրանում ամփոփված 24 ռեֆերատներն ու գիտական հոդվածները մեծ հետաքրքրություն են ներկայացրել ոչ միայն համալսարանի ուսանողների, այլև ընթերցող լայն հասարակայնության համար։ «Սույն ժողովածուն, ինչպես նաև նրա հետ միաժամանակ հրապարակվող պատմական ու սոցիոլոգիական ժողովածուները, ամփոփում են գավառագիտական կաբինետի ու համապատասխան ամբիոնների բաց նիստերում կարդացված զեկուցումները, մասնակիորեն նաև համալսարանի գավառագիտական կաբինետի հավաքած և կովկասագետ գիտնականների գիտական արշավախմբերի աշխատանքների նյութերը»[12], նշվում է այդ ժողովածուի առաջաբանում։ Ժողովածուն կազմողներն իրենց այդ քայլը բացատրում են նրանով, որ Անդրկովկասը հանդիսանալով առանձնահատուկ բազմազանություն ունեցող երկրամաս, չափազանց վատ է ուսումնասիրված։ Մինչդեռ, ինչպես նշում են ժողովածուն կազմողները, այնտեղ ուսումնասիրության համար հարուստ և օգտակար նյութեր կարող են գտնել թե՛ տնտեսագետն ու ազգագրագետը, թե՛ աշխարհագրագետն ու պատմաբանը, թե՛ բնագետն ու հնէաբանը և թե՛ սոցիոլոգն ու լեզվաբանը[13]։ Ելնելով նման հարցադրումից և ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներին տալով գավառագիտական թեքում, ստեղծելով գավառագիտական կաբինետ ու նրան կից թանգարան, համալսարանն իր շուրջը համախմբեց նույնիսկ Անդրկովկասից դուրս գտնվող կովկասագետներին ու գավառագետ-գիտնականներին, որով սկիզբ դրվեց երկրամասի սիստեմատիկ ու պլանաչափ գիտական ուսումնասիրության գործին։

Այս, ինչպես նաև տնտեսագիտության և սոցիոլոգիական ամբիոնների հրապարակած գիտական աշխատությունների ժողովածուները[14] ու այլ հրապարակումներ վկայում են համալսարանում կատարվող գիտական աշխատանքների խոր ու բազմակողմանի բնույթի մասին։

Համկ(բ)կ Կենտկոմը, Անդրերկրկոմը և ազգային հանրապետությունների կուսակցական մարմինները լուրջ ու հետևողական աշխատանք էին կատարում հասարակագիտական առարկաների դասավանդման որակի բարձրացման ուղղությամբ։ Այդ նպատակն էր հետապնդում նաև 1930 թ. հունվարի 25—27-ը

---

11 «Закавказский краеведческий сборник», Тифлис, 1930.

12 Նույն տեղում, էջ 1։

13 Նույն տեղում։

14 «Научные записки Закавказского коммунистического университета им. 26-и», т. I, Тифлис, 1931; Г. Соселия, К вопросу о происхождении государства у картвелийских племен, Тифлис, 1931, «Вопросы философии и социологии марксизма», Тифлис, 1931.

կոմունիստական համալսարանի և մարքսիստ պատմաբանների ընկերության անդրկովկասյան բաժանմունքի հրավիրած կուսակցության պատմության, լենինիզմի և Կոմինտերնի պատմության դասախոսների կովկասյան I կոնֆերանսը։ Այդ կոնֆերանսում Ֆ. Մախարաձեն կոնկրետ խնդիրներ է դնում մարքսիզմ-լենինիզմի դասախոսների ու պրոպագանդիստների առջև։ Նրա, ինչպես նաև Լիսովսկու և Ա. Սեֆի զեկուցումների առթիվ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցած Ա. Շահսուվարյանը, Գ. Խաչապուրիձեն, Կ. Ղազարյանը, Ա. Բոլոտնիկովը և ուրիշներ պատմում են իրենց ուսումնական հաստատություններում և 26 կոմիսարների անվան կոմհամալսարանում մարքս-լենինյան տեսության, կուսակցության և Կոմինտերնի պատմության դասավանդման դրվածքի և այդ գործում ձեռք բերված փորձի մասին։ Ցանկություն է հայտնվում տարբեր միջոցներով բարձրացնելու ուսանողների, դեկավար կադրերի և ընդհանրապես աշխատողների շրջանում տարվող քաղաքական-գաղափարական աշխատանքի մակարդակը[15]։ Այդ ցանկությունն իրականացնելու և մյուսների դրական փորձին հաղորդակից լինելու նպատակով համալսարանի դեկավարությունը նախապես նամակներ էր հղել Սվերդլովի անվան (Մոսկվա), Արտեմի անվան (Խարկով), Տաշքենդի, Լենինգրադի և Սվերդլովսկի կոմունիստական համալսարաններին[16]։

Մինչ այդ կոնֆերանսը՝ դեռևս 1927 թ. մարտի 24-ին, Մ. Օրախելաշվիլու նախագահությամբ համալսարանի նորաստեղծ գիտական խմբակի նիստում քննվել էր ազգային հարցի վերաբերյալ Գ. Սուտիրինի զեկուցումը։ Այդ նիստում ընտրվում է խմբակի բյուրո, որի կազմի մեջ մտնում են Մ. Ցխակայան, Մ. Օրախելաշվիլին, Ս. Կասյանը, Հ. Նազարեթյանը, Ա. Գուլոյանը, Ս. Սեֆը, Գ. Սուտիրինը և ուրիշներ[17]։

Ուսումնական ծրագրին համապատասխան, համալսարանի ուսանողները տարբեր ժամկետներով մեկնում էին արտադրական պրակտիկայի, որի ընթացքում զբաղեցնելով կուսակցական-սովետական մարմինների կամ արդյունաբերական ձեռնարկությունների ու կոլտնտեսային կազմակերպությունների որևէ օղակի դեկավար պոստ, ոչ միայն ուսումնասիրում էին աշխատանքների վիճակը, այլև օգնում բարելավելու այն։ Վերադառնալուց հետո նրանք համալսարանի դեկավարությանն ու Անդրերկրկոմի համապատասխան բաժնին հաշվետվություն էին ներկայացնում արտադրական պրակտիկայի արդյունքների մասին։

Ուսանողների պրակտիկ աշխատանքի հաջող կազմակերպումը միշտ էլ գտնվել է Համկ(բ)կ Անդրերկրկոմի և համալսարանի դեկավարության ուշադրության կենտրոնում։ Այդ են վկայում պրակտիկայի արդյունքների ամփոփման ու փորձի փոխանակման նպատակով պարբերաբար հրավիրված հավաքները։ Երկրորդ կուրսեցիների պրակտիկան Անդրկովկասի գյուղական շրջաններում, որն անցկացվում էր Համկ(բ)կ Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի և Անդրերկրկոմի 1931 թ. դեկտեմբերի 10-ի որոշումների կատարումը ապահովելու տեսանկյունով, կազմակերպվել է Լենինականի գավառում, Օղուրգետիի, Զուգդիդիի, Ստեփանավանի, Ալի-Բայրամլիի և այլ շրջաններում։ Պրակտիկան

---

15 ՄԼԻ ՎՄԱ, ֆ. 128, ց. 1, գ. 333, թ. 1—108։

16 Նույն տեղում, գ. 15, թ. 19։

17 Նույն տեղում, գ. 221, թ. 1—75։

սմփոփող փաստաթղթերում արձանագրվել է, որ ամրապնդելով գյուղական կուսբջիջները, բարձրացնելով կուսակցության գլխավոր գծի համար աջ և «ձախ» օպորտունիզմի դեմ պայքարի քաղաքական-դաստիարակչական մակարդակը, ուսանողները միաժամանակ պատվով են կատարել զարնանացանի կամպանիայի մարտական խնդիրները։ Օգնելով տեղական կազմակերպություններին, ուսանողները լավ փորձ էին ձեռք բերում «գյուղում տարվող կուսակցական-կազմակերպական և դաստիարակչական աշխատանքի բովանդակությանը ծանոթանալու, նրա ձևերին ու մեթոդներին տիրապետելու գործում»[18]։

Անդրերկրկոմի 1923 թ. մարտի 31-ի որոշմամբ առաջին կուրսեցիներն իրենց արտադրական պրակտիկան անցկացրին Թբիլիսիի մահուդի կոմբինատում, մետաքսաթելի ֆաբրիկայում և Կալինինի անվան ու 26 կոմիսարների անվան գործարաններում։ Այդ ընթացքում նրանք մեծ դեր խաղացին նշված ձեռնարկությունների կուսբջիջների կուսակցական-կազմակերպական և մասսայական աշխատանքը վերակառուցելու գործում։

«Բարձրագույն կոմունիստական դպրոցներ կազմակերպելու մասին» Համկ(բ)կ Կենտկոմի 1932 թ. հոկտեմբերի 21-ի որոշման համաձայն, երկրի մյուս կոմբուհերի նման, 26 կոմիսարների անվան կոմհամալսարանը ևս վերակազմավորվեց բարձրագույն կոմունիստական գյուղատնտեսական դպրոցի, որը 1933 թ. հունվարից իր գործունեությունը ծավալեց կուսակցության առաջադրած նոր պահանջների ոգով։ Կենտկոմի այդ որոշումը, որն ուղղված էր գյուղատնտեսության ընդհանուր վերելքն ապահովելու և գյուղական կուսակցական ու սովետական ապարատի աշխատանքները բարելավելու նպատակին, արմատական բեկում մտցրեց ինչպես մյուս, այնպես էլ 26 կոմիսարների անվան բարձրագույն դպրոցի աշխատանքներում։ Կենտկոմի հիշյալ որոշման մեջ նշվում էր, որ անհրաժեշտ է «այնպիսի ղեկավար աշխատողների առկայություն, որոնք լայն քաղաքական զարգացման հետ միասին բավարար մասնագիտական գիտելիքներ ունենային ինչպես գյուղատնտեսական տեխնիկայի բնագավառում, այնպես էլ ագրոնոմիայի և անասնապահության բնագավառներում»[19]։

Վերակազմավորվելուց հետո՝ 1933 թ., 26 կոմիսարների անվան բարձրագույն գյուղատնտեսական դպրոցն ընդունվեցին 312 հոգի. դա ռեկորդային թիվ էր բոլոր տարիների ընդունելությունների համեմատ։ Նրա երկամյա բաժինը պատրաստելու էր կոլտնտեսությունների, սովխոզների և ՄՏԿ-ների, իսկ եռամյա բաժինը՝ գյուղատնտեսական շրջանների կուսակցական ղեկավար աշխատողներ։ Դպրոցին կից կար նաև գյուղական շրջանների կոմերիտական ղեկավար կադրերի պատրաստման միամյա բաժանմունք։ 1934 թ. մարտի դրությամբ դպրոցն ուներ 560 ուսանող։

Բարձրագույն կոմունիստական գյուղատնտեսական դպրոցի վերակազմավորված 26 կոմիսարների անվան անդրկովկասյան կոմունիստական համալսարանն իր գոյության տասնամյակը բոլորից կուսակցության առաջադրած նոր խնդիրների կատարման մեկամյա աշխատանքից հետո։ Այդ առթիվ հրավիրված հանդիսավոր նիստում (1934 թ. մարտի 29) բացման խոսքով հանդես

---

18 Նույն տեղում, գ. 327, թ. 43, 66—67, 105։

19 «Правда», 22. IX. 1932.



եկավ Անդրֆեդերացիայի ժողկոմխորհի նախագահ Ղ. Մուսաբեկովը։ Կոմհամալսարանի 10-ամյա գործունեության և առաջիկա խնդիրների մասին զեկուցեց նրա ռեկտոր Ա. Գուլոյանը[20]։ Հանգամանալից զեկուցումից հետո ողջույնի խոսքով հանդես եկան ՎԿ(բ)Կ Կենտկոմի, ՀամԼԿԵՄ Անդրերկրկոմի, Անդրֆեդերացիայի հողժողկոմատի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի բարձրագույն կոմունիստական գյուղատնտեսական դպրոցների, Երևանի անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի, Թբիլիսիի պետական համալսարանի և ուրիշ կազմակերպությունների ու հաստատությունների ներկայացուցիչները։ Հոբելյարի հասցեով ողջույնի ջերմ մաղթանքներ ու լավագույն ցանկություններ էին հղել Անդրֆեդերացիայի ու եղբայրական հանրապետությունների կուսակցական-սովետական մարմինների, երկրի կոմբուհերի, Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի բարձրագույն ուսումնական հաստատությունների և այլ կազմակերպությունների ղեկավարներ։ Այսպես, օրինակ, Ս. Տեր-Գաբրիելյանը գրել էր. «Ամբողջ սրտով ողջունում եմ մանկավարժական կազմին ու ուսանողներին մեծ տոնի առթիվ և լիակատար հաջողություն եմ ցանկանում դպրոցի վրա դրված պատասխանատու խնդրում՝ տեսականորեն ու գործնականորեն զինված կադրերի պատրաստման գործում, որոնք այնքան անհրաժեշտ են ԱՍՖՍՀ-ի գյուղատնտեսության արմատական սոցիալական վերակառուցման ներկա էտապում»[21]։

1923—1933 թթ. անդրկովկասյան կոմունիստական համալսարանն ավարտել են 775 հոգի, այդ թվում՝ 103 կին։ Ըստ սոցիալական դրության շրջանավարտների 42,5%-ը եղել են բանվորներ, 38,8%-ը՝ գյուղացիներ, իսկ 18,7%-ը՝ ծառայողներ։ Կուսանդամ էր նրանց 82,4%-ը, ՀամԼԿ(բ)Կ անդամության թեկնածու՝ 10,5, իսկ կոմերիտական՝ 7,1%-ը։ Այդ տարիներին կոմհամալսարանին կից գործել են նաև երեկոյան կոմհամալսարան, ասպիրանտուրա, կանանց կոոպերատիվ և այլ տարբեր դասընթացներ, որոնք տվել են 577 որակյալ կադրեր։ 1925 թ. Անդրերկրկոմին կից գործել են նաև եռամսյա դասընթացներ, որոնց աշխատանքներն ընթացել են կոմհամալսարանի ղեկավարությամբ։ Ինը տարվա ընթացքում այդ դասընթացներում սովորել են 1665 կուսակցական ակտիվիստներ։ 1923—1924 ուստարվա 55 դասախոսների (կոմունիստներ էին 16-ը) դիմաց 1933 թ. վերջերին բարձրագույն դպրոցում դասախոսում էին 127 հոգի, որոնց 41%-ը (52 հոգի) ՀամԿ(բ)Կ անդամներ էին[22]։

Բարձրագույն գյուղատնտեսական դպրոցի վերածված կոմհամալսարանը 1936 թ. տվեց իր տասներեքերորդ շրջանավարտներին (107 հոգի)։ Նրանք բոլորն էլ կոմունիստներ էին և ունեին կուսակցական ղեկավար աշխատանքի փորձ։ Սոցիալական դրությամբ 107 շրջանավարտներից բանվորներ էին 47, կոլտնտեսականներ՝ 37, իսկ ծառայողներ՝ 13 հոգի։ Նրանցից 34-ը ադրբեջանցի էին, 33-ը՝ վրացի, 23-ը՝ հայ, 6-ը՝ ռուս, 3-ը՝ ուկրաինացի։ Մնացած 5 հոգին ներկայացնում էին այլ ազգություններ։ Բոլորն էլ տիրապետում էին թրթուրավոր տրակտոր և ավտոմեքենա վարելու գործին[23]։

---

20 «Заря Востока», 16. III.; 29 III, 30. III 1934.

21 «Խորհրդային Հայաստան», 1. IV. 1934։

22 «Заря Востока», 29. III. 1934

23 Նույն տեղում, 29. VI. 1936։

26 կոմիսարների անվան անդրկովկասյան կոմհամալսարանի սովորողների սոցիալական կազմը տարիների ընթացքում փոփոխություններ է կրել։ Ըստ սոցիալական դրության, առաջին տարվա սովորողների 40,1%-ը բանվորներ էին, 14,7%-ը՝ գյուղացիներ, իսկ 45,2%-ը՝ ծառայողներ։ 1926—1927 ուստարում գյուղացիների կազմը հասավ 54,4%-ի։ Դա տեղի էր ունեցել ի հաշիվ ծառայողների, որոնց տոկոսն աստիճանաբար նվազելով արդեն 1932—1933 ուստարում կազմում էր 10,7։ Այդ նույն տարում բանվորների թիվը կազմում էր սովորողների 64,3%-ը։ Սովորողների կրթական մակարդակը տարեցտարի բարելավվում էր՝ ի հաշիվ կուսդպրոցների շրջանավարտների։ Համալսարանի սովորողների հիմնական կազմի միջին տարիքը եղել է 21—25։ Եթե մինչև 20 տարեկան սովորողների թիվը 1925—1926 ուստարում կազմում էր 21,7%, ապա երեք տարի անց՝ 1928—1929 ուստարում այն իջավ մինչև 8,7%-ի։ 26—30 տարեկանների կազմը տատանվել է 16—20%-ի միջև, մինչդեռ նույն ժամանակաշրջանում 21—25 տարեկան սովորողների թիվը 48,5%-ից հասել էր 71,3%-ի[24]։

Հայաստանում ադրբեջանցի և ռուս, իսկ Վրաստանում ու Ադրբեջանում հայ ու ռուս ազգաբնակչության մեծաթվության պատճառով Անդրերկրկոմն ու համապատասխան ազգային հանրապետությունների կուսկենտկոմները համալսարանում սովորելու էին ուղարկում նաև այդ ազգությունների ներկայացուցիչների։ Վերցնենք Անդրկովկասի երեք հանրապետություններից միայն 1923—1929 թթ. սովորելու գործուղվածների թիվը և համեմատենք այնտեղ սովորող նրանց հիմնական ազգությունների ներկայացուցիչների թվի հետ։ Այս դեպքում կստանանք հետևյալ պատկերը. 243 հայ ունկնդիրներից միայն 139 հոգի էին գործուղվել ՀԿ(բ)Կ Կենտկոմի կողմից, մնացած 104 սովորողները ուման էին մեկնել Վրաստանի և Ադրբեջանի կուսակցական կազմակերպությունների գործուղմամբ։ ՎԿ(բ)Կ Կենտկոմն այդ տարիներին սովորելու էր ուղարկել 300 հոգի, բայց համալսարանի ունկնդիրներից վրացի էին միայն 189-ը։ Ադրբեջանից գործուղվել էր 260 մարդ, բայց համալսարանում սովորում էր 180 ադրբեջանցի[25]։ Այս ամենը վկայում է ազգային կադրերի պատրաստման գործում փոխադարձ օգնության և եղբայրական հանրապետություններում բնակվող մյուս ազգությունների շրջանում կատարվող աշխատանքների բարելավման նպատակով ձեռնարկված լուրջ քայլերի մասին։

Կոմունիստական համալսարանի աշխատանքների հաջողությունը պայմանավորված է եղել ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի ամենօրյա օգնությամբ ու ղեկավարությամբ։ Համալսարանն Անդրերկրկոմի մշտական հոգատարության առարկան էր և նա միշտ էլ իր ուշադրության կենտրոնում է պահել համալսարանի գործունեությունը. լուծել նրա դասախոսական կազմին և ուսանողությանը հուզող բազմաթիվ հարցեր, օգնել առաջադրված խնդիրների կատարմանը խանգարող երևույթների վերացմանը, միաժամանակ հետևողականություն հանդես բերել ղեկավար կադրերի պատրաստման վերաբերյալ կուսակցության պահանջներն անշեղորեն կատարելու գործում։ Անդրերկրկոմը համալսարանի ղեկավարության ուշադրությունը բևեռում էր ուսումնական պրոցեսի հետագա ստեղծագործական կատարելագործման վրա։ Հատկապես

---

24 ՄՀԻ ՎՄԱ. ֆ. 128. ց. 1. գ. 238. թ. 27. գ. 419. թ. 154։

25 Նույն տեղում։

խրախուսվում էին ուսումնադաստիարակչական աշխատանքը դասախոսների և ուսանողների գիտահետազոտական աշխատանքների հետ զուգակցելու փորձերը։ Դրանց շնորհիվ հնարավորություն էր ստեղծվում կոմունիստական համալսարանը դարձնելու երկրամասի կուսակցական լուսավորության կենտրոն[26]։ Համալսարանի առջև դրվում էր ոչ այնքան աշխատանքների ընդարձակման, որքան դրանց որակի բարձրացման խնդիրը։

Անդրերկրկոմն ընդգծված նշանակություն էր տալիս կոմհամալսարանի սովորողների ինտերնացիոնալ դաստիարակությանը։ Այդ առումով կարևոր էր Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի պատմության առարկաների դասավանդման գործի վերակառուցման և «Անդրկովկասի պատմություն» մեկ միասնական առարկայի ուսուցման մասին որոշումը[27]։ Կոմհամալսարանի (բարձրագույն կոմունիստական գյուղատնտեսական դպրոցի) աշխատանքների բարելավման նպատակով երկրային կոմիտեի ձեռնարկած միջոցառումները շարունակվեցին մինչև 1936 թ. հունիսը՝ մինչև ուսումնական հաստատության փակվելը։ Այդ կապակցությամբ նրա լրիվ դասընթացները չավարտած ուսանողներից 115-ը գործուղվեցին Հայաստանի բարձրագույն կոմունիստական գյուղատնտեսական դպրոց՝ ուսումը շարունակելու[28]։

Նպատակ չունենալով մանրամասնորեն անդրադառնալու Անդրկովկասյան կոմունիստական համալսարանի աշխատանքների բոլոր բնագավառների վերլուծությանը, նկատենք, որ համալսարանի շրջանավարտները կուսակցական, սովետական ու տնտեսական լայն գործունեություն են ծավալել ոչ միայն Անդրկովկասում։ Նրանցից ոմանք այժմ էլ շարունակում են գիտամանկավարժական աշխատանք կատարել երկրի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում ու գիտահետազոտական ինստիտուտներում։ Կոմհամալսարանի սաներից Ա. Եղիազարյանը, Հ. Դոնոյանը, Ա. Ադոյանը, Ս. Պարսամյանը, Հ. Գալստյանը, Ե. Խաչատրյանը, Վ. Հարությունյանը, Ս. Քարամյանը, Խ. Սեկոյանը, Ս. Գաբրիելյանը, Հ. Մկրտչյանը, Ի. Թաիրյանը և շատ ուրիշներ հետագայում ակտիվ ու բեղմնավոր գործունեություն ծավալեցին Հայաստանի կուսակցական-սովետական մարմիններում ու ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում։

Ինչպես արդեն նշվեց, կոմհամալսարանի ղեկավարության և մանկավարժական կոլեկտիվի գլխավորությամբ գործել են նաև մարքսիզմ-լենինիզմի ու գավառային աշխատողների վերապատրաստման ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմին կից կարճատև դասընթացներ, որոնք հանդիսանում էին այդ հեղինակավոր ուսումնական հաստատության բաղկացուցիչ մասը։ Միայն առաջին երկու տարվա գործունեության ընթացքում դասընթացներն ավարտեցին 179 հոգի։ Դասընթացների երկրորդ խմբի պարապմունքները տեղի ունեցան 1926 թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին։ Ուշագրավ է այն փաստը, որ դասընթացների երկրորդ խմբի պարապմունքները սկսվելու կապակցությամբ հրավիրված հանդիսավոր նիստին մասնակցելու էր եկել Ս. Օրջոնիկիձեն, որը դասախոսների և ունկնդիրների առջև հանդես եկավ երկրի միջազգային ու ներքին դրու-

---

26 «Известия Закавказского краевого комитета ВКП(б)», 1929, № 7—8 (44—45), с. 18—19.

27 Նույն տեղում, էջ 19։

28 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, ց. 21, գ. 28, թ. 235։

թյան մասին ընդարձակ զեկուցումով։ Դասընթացներն ավարտվեցին սեպտեմբերի 12-ին։ Այդ առթիվ նույնպես տեղի ունեցավ հանդիսավոր նիստ, որին ներկա էր և ելույթ ունեցավ Շ. Էլիավան։ Դասընթացների նպատակների ու խնդիրների, դասախոսների ու ունկնդիրների անելիքների, ինչպես նաև նրանց աշխատանքների արդյունքների ամփոփմանը նվիրված զեկուցումով հանդես եկավ դասընթացների վարիչ Ա. Գուլոյանը։ Դասընթացների 121 ունկնդիրներից (ավարտեցին 114 հոգի) այրբեջանցիներ էին 43-ը, վրացիներ՝ 34-ը, ռուսներ՝ 13-ը, այլ ազգությունների ներկայացուցիչներ՝ 10-ը։ 21 հայերից Հայաստանի կոմունիստական կազմակերպությունը ներկայացնում էին 16 հոգի։ Բանվորներ էին 42-ը, գյուղացիներ՝ 63-ը, ծառայողներ՝ 16-ը։ Կանայք 18 հոգի էին։ Ըստ աշխատանքի բնույթի սովորողների կազմը ներկայացնում էր հետևյալ պատկերը. գավկոմների և շրջկոմների քարտուղարներ էին 19 (այդ թվում ԼԿԵՄ շրջկոմների՝ 9 հոգի), իսկ բաժինների վարիչներ՝ 41 հոգի։ Դասընթացներում ընդգրկված էին նաև 24 հրահանգիչներ և ռազմաքաղաքական ու սովետական 37 աշխատողներ[29]։

Անդրերկրկոմին կից զեկավար աշխատողների վերապատրաստման դասընթացները հետագայում կրել են մի շարք փոփոխություններ ինչպես ունկնդիրների կազմի ու աշխատանքի բնույթի, այնպես էլ ուսման տևողության, ուսումնական ծրագրերի ու պլանների և դասընթացների նպատակների ու խնդիրների տեսակետից։ Անդրերկրկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ու զեկավար աշխատողների վերապատրաստման դասընթացների տարբեր տարիների շրջանավարտներից են Ս. Թովմասյանը, Խ. Հակոբջանյանը, Գ. Սաղաթելյանը, Լ. Շահբազյանը, Հ. Օհանջանյանը, Գ. Գևորգյանը, Ս. Նալբանդյանը, Վ. Ղազարյանը, Մ. Հասրաթյանը և ուրիշներ։ Հանրապետության կուսակցական-սովետական և տնտեսական մարմիններում նրանց կատարած աշխատանքը ըստ արժանվույն է գնահատվել և արժանացել լայն ճանաչման։

26 կոմիսարների անվան անդրկովկասյան կոմունիստական համալսարանի մեծագույն վաստակը եղավ այն, որ նա պատվով կատարեց կուսակցական ու սովետական կադրերի պատրաստման ու վերապատրաստման մասին կուսակցության կողմից առաջադրված խնդիրները և իր սաներին դաստիարակեց լենինյան կուսակցության մեծ գործին անհուն նվիրվածության ոգով, իսկական ինտերնացիոնալիզմի, Անդրկովկասի ու ամբողջ Սովետական Միության ժողովուրդների բարեկամության ու եղբայրության ոգով։

ИЗ ИСТОРИИ СОЗДАНИЯ И ДЕЯТЕЛЬНОСТИ ЗАКАВКАЗСКОГО КОММУНИСТИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ 26-И КОМИССАРОВ

ЦОЛАК ГЕВОРКЯН

Резюме

Еще на заре создания Коммунистической партии ее основатель и вождь мирового пролетариата В. И. Ленин заботился о подготовке кадров пропагандистов и агитаторов, способных организовать борьбу

[29] «Заря Востока», 30. V; 1. VI; 15. VII; 14. X. 1926.

широких масс трудящихся против царизма и капитализма. Лишь победа Великой Октябрьской социалистической революции дала возможность для создания многотысячного отряда теоретически подготовленных, политически зрелых и опытных партийно-советских работников.

Одним из учебных заведений, готовивших партийные кадры, являлся созданный в 1923 г. решением ЦИК ЗСФСР Закавказский коммунистический университет (ЗКУ). Велики его заслуги в подготовке партийно-советских работников, деятельность которых оставила неизгладимый след в политической и хозяйственной жизни Закавказья. У колыбели ЗКУ стояли такие интернационалисты, как С. Орджоникидзе, Ал. Мясникян, М. Орахелашвили, Ф. Махарадзе и другие представители ленинской гвардии.